

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլի, կէս տարվանը 6 ռուբլի.
Առանձին համարները 5 կոպէկով.

Թիֆլիս-ում գրվում են միմիայն խմբագրատան մէջ.
Մէք հասցէն. Тифлис, Редакция «Мшакъ».
Կամ Tiflis, Rédaction «Mschak».
Տէլէֆոն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտան 10—2 ժամ
(բացի կիրակի եւ առաջօրեայ).

Յայտարարութիւն ընդունվում է առանձին լեզուով.
Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր տողատեղին 10 կոպէկ.
Տէլէֆոն № 253.

Հիմնադրի Գրիգոր Արծրունի

ԲԱՅՎԱԾ Է ԿԵՍ ՏԱՐՎԱՅ ԲԱՅԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ՄՇԱԿ

ԲԱՅԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ԵՒ ԴՐԱՄԱՆԱԿԱՆ ԼՐԱԳՐԻ

ՄՇԱԿԻ վեց ամսվայ գինն է, յուլիսի 1-ից մինչեւ տարվայ վերջը, Վճ 10 ռուբլի, մէկ ամսվայը—մէկ ռուբլի: Ամերիկայի բաժանորդները պէտք է վճարեն կէս տարվայ համար 3 ռուբլի: Եւրոպայի բաժանորդները—16 ֆրանկ:
Կայսրութեան ուրիշ քաղաքներից «ՄՇԱԿԻ» գրվելու համար եւ առհասարակ նամակներ եւ ծրարներ ուղարկելիս, պէտք է գրմով հետեւեալ հասցէով. ТИФЛИСЪ, Редакция «МШАКЪ», իսկ արտասահմանից՝ ТИФЛИС, Rédaction du journal arménien «MSCHAK»:
Յայտարարութիւնները ընդունվում են բոլոր լեզուներով:
Ա. ՊԱՆՈՒԿ ԲԱՅԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ԶԷ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՍԱԽԱՐԻՆ-ԱՄԽԱՆԱԲԱՐ

Վերջին երկու-երեք տարվայ ընթացքում «կապրիզ» անուանված բլիթները մեծ ժողովրդականութիւն են վայելում Թիֆլիսի բանուորների շրջանում: Ժողովրդականութեան պատճառը հեշտ է հասկանալի,—այդ բլիթների մատչելի գինն է, որ երեք-չորս տարվայ ընթացքում 25 կոպէկից ընկել է մինչեւ 12 կոպէկ: Ուրեմն աւելի քան 50%: Գների մի այսպիսի արագ ընկնելը ուրախութեամբ միայն պիտի պատճառէր, եթէ նա հետեւանք լինէր արդիւնաւորութեան զարգացման, որի շնորհիւ գրեթէ ընկնում են, առանց միջերանքի յատկութեանը միասնելու: Բայց քանի այն է, որ այստեղ եւս մենք գործ ունենք ֆալսիֆիկացիայի հետ,—չաքարի տեղ բլիթների խմորում սախարին են ցցում: Երբ խեղճ գլխուն է, երեսայինը աչքումը,—ու մեր արհեստագործականագր շաքար՝ այդ նոր ստորագրութիւնը «կապրիզ» քաղցրութեամբ՝ չէ էլ մտածում, թէ իւրաքանչիւր բլիթի հետ թոյն է ընդունում ներքը: Միայն կապրիզը չէ, որ իր մէջ սախարին է պարունակում: այն գինին, որ գործ է ածում մեր արհեստագործականագրը, էժանագին լիկեօրները եւ այլն, նոյնպէս մեծ քանակութեամբ սախարին են պարունակում: ոչ ոքից ծածուկ չէ, բայց մասնաւոր չաւառարում, որ վերջին հինգ-վեց տարվայ ընթացքում առաջ է եկել մի նոր դասակարգ—«գինու ռեստորաններ» դասակարգը, ինչպէս ժողովուրդին է առում, որի մասնագիտութիւնը կանաքաղաղի հարսանիքի հրաշքի կրկնութիւններն է:

Սախարին գիւտը տեղի ունեցաւ 1885 թ.ին եւ պատկանում է գերմանացի երկու քիմիկոսներին—Յանսլեյբիցի եւ Լիստին: Գարածուխից էլէկտրական լուսաւորութեան համար կղզւապատասխան ժամանակ՝ քարածուխից անջատում է քարածուխածխ (goudron de houille), որից, ինչպէս Բաֆայէլ Ժօրժ Լէվին է ասում, օր չէ անցնում, որ նորանոր նիւթեր չարտադրեն, մինչեւ այժմ այդ ձիւթից արդիւնաւորութիւն են զանազան հոտաւէտ իւղեր, դե-

ղեր եւ ներկեր: օրինակ՝ անտիպէրին, ալիզաբին, սախարին եւ այլն:

Սախարին միասնակարգութիւնը, որ կայանում է ստամոքսի պէպսինի մակարդացնելու, իր վրա է դարձրել պետութիւններից շատերի եւ մասնաւոր գիտական հիմնարկութիւնների ու շաղթութիւնը: Իտալիայում, Պորտուգալիայում, Սպանիայում եւ այլն առնչեալ արգելված է սախարին պարունակող ուտեստների ներմուծումը: Ֆրանսիայում սախարին համարվում է չաքարի ֆալսիֆիկացիա: Թոյնեղով մի կողմը հանրապետութեան նախագահի 1888 թ. եւ միւնիստրական 1893 թ. դէկրէտները, որոնք արգելում են սախարին ներմուծումը: Ֆրանսիա, յիշենք այստեղ ներկայ տարվայ մարտի 30-ի (ն. ա.) օրէնքի երկու յօդուածները, որոնք թոյլ են տալիս սախարին արդիւնաւորութիւնը եւ առեւտուրը միայն բժշկական կարիքների համար: եւ ոչ միայն այդ, այլ եւ այն անձինք, որոնք նկատված կը լինեն ոչ միայն սախարին, այլ նոյն իսկ մի ուրիշ չաքարայն անուշ քաղցրանիթի արդիւնաւորութիւնը կամ ուտեստները այդ նիւթերով համախառն մէջ՝ կենթարկվեն առաջին անգամ 500—1000 ֆրանկ, իսկ երկրորդ անգամ կրկնակի տուգանքի:

Ի՞նչ է ֆալսիֆիկացիայի օգուտը: Յաճախ տեսակի սախարին 300 անգամ քաղցր է չաքարից, ուրեմն նրա մէկ կիլօն—300 կիլօ չաքարին եւ արժէ Գերմանիայում մօտ 34 ֆրանկ, —չաքարի 300 կիլօն արժէ 300 ֆրանկ, սախարիները—օգուտը հաւասար է մօտ 266 ֆրանկի: Ընտիր տեսակի սախարին, որ 500 անգամ քաղցր է չաքարից, 450 ֆրանկ զուտ օգուտ է տալիս ֆալսիֆիկացիային:

Մենք տեսնում ենք, ուրեմն, որ գալթակ-դութեան առիթը մեծ է եւ պետութիւնների միջամտութիւնը աւելի քան տեղի, սակայն աւելի սիրելի է հաւատալ, որ ժամանակի ընթացքում անհատը կը հասնէ բարոյական այն մակարդակին, որ առանց կողմնակի միջամտութեան, նրա մարդկային արժանապատուութիւնը կը զարհուրէ այն ստոր ինտելեկտի, որի անունը «թալան» է...

Գ. Տէր-Ղեւոնդեան

ԴԱՐՁՆԱԿԱՆՈՒԹԻՒՆ

Դարձեալ համայնքի մասին.—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Սախարին—առիշտաբար. Նամակ նուրբ. Ներքին յուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ.—Կ. Պօլսի լրագրներից. Արտաքին յուրեր. Հնդկաստան.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ.—ՆԵՐ.—ԲԱՅԱՆՈՐԴԱԳՐ.—Գիւղացու ցաւերից:

ԴԱՐՁՆԱԿԱՆ ՄԱՍԻՆ

Մենք հաղորդել էինք, որ կառավարական շրջաններում նորից հարց է ծագել գիւղական համայնքի լինել—չը լինելու մասին: Ազգեցիկ մի քանի շրջաններ այն կարծիքն են յայտնում, որ Ռուսաստանի անտեսական յետամնացութեան պատճառը գուցէ գիւղի համայնական կազմակերպութիւնն է, որ ճնշում է առանձին անհատներին ինքնագործութիւնը, թուլացնում է նախաձեռնող ոգին եւ չափազանց հպարտեցնում են նրանց համայնքի որոշումներին:
Այդ առարկութիւնները ճիշդ են: Սակայն նրանք նոր չեն եւ առաջ են բերվել շատ անգամ համայնքի հակառակորդների կողմից: Համայնական կազմակերպութիւնը ունի իր աննպաստ կողմերը. բայց հարցը վերջնական լուծում ստանալու համար կարելի է աչքի առաջ ունենալ, թէ որ-

քան այդ թերութիւնները ուժեղ են այն մեծ արժանաւորութիւններից, որ ունի գիւղական համայնքը: Ուսումնասիրութիւնը ցոյց է տալիս, որ համայնական կազմակերպութիւնը ունի շատ էական նպատակաւոր կողմեր բոլոր այն դէպքերում, երբ պէտք է հաւաքական գործեր կատարել եւ ընդհանուր բարեօրոշմներ մտցնել գիւղական անտեսութեան եւ կեանքի մէջ: Այն տեղերում, ուր աջողվել է համոզել համայնքներին բարեփոխել անտեսութեան եղանակը, գիւղը մի անգամից սկսել է զգալ բարեփոխութիւններ իր բարերար ազդեցութիւնը: մինչդեռ առանձին անհատների արած փորձերը եւ կատարելագործութիւնները էական նշանակութիւն չեն ստանում, քանի որ նրանք զեռ սահմանափակ շրջանում են կատարվել եւ չեն տարածվել գիւղական մեծամասնութեան մէջ:

Համայնքի ազդեցութեան մասին կարծիք կազմելու ժամանակ կարելի է լսել եւ գիւղացիների իրանց խորհրդածութիւնները: Ցանկալի է, որ եւ մեզանում գործին տեղեւոյ մարդիկ յայտնեն իրանց կարծիքները այդ հարցի մասին, մասնաւորապէս որ նրանով այժմ զբաղված է բարձրագոյն հաստատված խորհրդակցութիւնը:

ԲԱՅԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ԳՐԱԴԱՐԱՆԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

III

«Այսպէս եմ մեծ»...

Յուրա ձմեռ էր. դուրսը քամի, բուք ու բուռ, օրը մթնել, թիփին կատղել, արեւ, երկինք մշուշ մէջ կորել էին: Եւ աշխարհի վերջն էր կարծես: «Օձն իր պորտով, հաւքն իր թևով» դուրս չէր գալ: Ո՞վ էր կեանքից, գրէ իր անցիկը, որ էջ թիփում հոգի հաւատար, ոտ դուրս դնէր տան դռնից: Բայց ուզէի թէ չուզէի եւ ոչխարի խոտը պիտի բերէի, իրիկուսով պատրաստէի: Խոտնոցն էլ հէ—գիւղի հեռու: Եւ ծայրին էր: Մշակ էի, աղաւթ այդպէս էր պատուիրել: Մշակն էլ խոս հոգի չուէի, որ ձիւն-թիփուց, բուք-բորանից վախճայի: Թէ միտէի, առաջէի էլ, փողոցի մէջ փախ կտրէի ուս հոգն էր...: Մայր ունէի, որ կոխոր, մղկտար, թէ հայրս գար սրտի ցաւից մոռնար...: Եթում էի (որը), անհայր, անհայր, անտէր եթում, էս աշխարհի խորթ դուստր...: Մօրս գիրկը իսկի չէի եւ տեսել եւ ոչ մի օր հօրս բերնից խօսք լսել...: Մինչ այդ տարին, տասնորոր տարին անտէր մեծցել, ծնածս արից ծառայել եղել, հալվել—մայկել, տանջվել—աճել, միշտ օտարի, խորթ օտարի չէմ էի եւ մայր...: Այդ էր ճակատս, անբաղդ կեանքիս ան գիրը...: Գիւրտ էր դուրսը, բուք ու բորան, խոտնոցն էլ հէ—գիւղի հեռու: Եւ ծայրին էր, բայց եւ

պիտի երթայի, աղաւթ այդպէս էր պատուիրել: Զուլ ֆէրաճիկս (վերնագրեալ) առայ վրաս, փաթաթվեցի, խուլուվեցի, մեծ քթոցն էլ շալակիս դուրս ելայ: Թիփու միջից, ձիւնի միջից էլ ինչպէս եմ վազ տուել, չնչապաւ, հեծ-հեծալով մի կերպ խոտնոցը ընկել, էլ չը գիտեմ:
Ձիւն ու սառցով դաղված դէմքս մոռնում էր. քամին ոռնում, փչում, շաղում, շառաւում էր, կարծես նա էլ ձիւնից-բուքից սառած մրսած մերթ մղկտում, մերթ կատաղած զառամ-ծեղունի ցուրտ ձմեռից, գոռում, գոչում էր ուժգին: Եւ այդ գոռում-գոչումի հետ ինչ որ մի խուլ ստակուտը հեծկտանք էր ինձ հանդուս, որ մերթ խեղդում, կորչում էր գիւ լուսնու ուժգին ոռնոցով, մերթ բեկբեկված կրնկրնկոցով լուսնու հեռուն, շատ հեռուն: Եւ ձեռքերով մրսած կապտած քիթ-բերանս տրորելով լցնում էի մեծ քթոցս ու մինչ ահով մտածում էի, թէ ո՞վ կընէր այդ սոսկալի, ահալի ժամին դուրսը մնացած, յանկարծ զոդալով, սրնաւընդալով ոտներն ընկաւ մի շան լակոտ: Լիզեց, կրծեց, ձիւնուտ արեւներս հոտհոտաց, ապա պոչը իրան քաշած դողդողալով, կասկածելով յետ փախաւ պատի տակը խոտի արան կծկեց: Նորից եկաւ, նորից լիզեց, հոտհոտաց, սիրուն դուռը վերեւ տնկեց վրնգլխալով, հայնացքն ուղղեց աչքերիս մէջ վախեցած, կարծես ուզում էր խօսել, խօսելուս հետ, չոր էս ուղու ընկեր եմ, եւ էլ անտէր, դուռն էլ անտէր, եւ էլ եթում, դուռն էլ եթում, մենք ախպէր եմ, այնպէս չէ...: Բայց չը գիտեմ ինչ հասկացաւ իմ հայնացքից, նորից փախաւ գոդ-գոդալով թագ կացաւ: Մտնքթոցը առայ շալակս

խնթը կը շարժվէր այդ պահուն, ասեմք չունչ էլ կար մէջս, որ շարժվէր...: Երկար տեսեց, չը գիտեմ ինչքան, բայց ես սկսեցի աւելի շատ ցրտից դողալ, սրնաւընդալ, եթէ մի քիչ էլ անցնէր, ցուրտն երեւի սիրտս կտանէր ու բանս արդէն պրծած էր...: Գոմին վաղուց դարձել էր, բայց երէկվայ սառնամանիք ասազաղը սուր նետի պէս ծակում էր: Այդ միջոցին չնիկս եկաւ, (չէ, երեւի նա էլ մրսաւ), հիւս ստրկի աղբրանքով մօտեցաւ մեծ չնեւին, քիթը տնկեց, նրանց դնչերը լիզեց, կարծես մի քան նրանց անց-աղաչեց: Ծնեմն եւ լուսն մէկ-մէկ եկան հոտհոտալիս նախ չնիկիս, ապա թէ ինձ ու հեռացան: Մի րօպէ աղաւթ ստով չունչ քաշեցի ու թէ ինչպէս տուն եմ ընկել մի կերպով—էլ չը գիտեմ...

Ներսի գոմը թախտիս վրա պառկած եմ: Թախտ եմ ասում, դէ ինչ թախտ, կոյանոցի (աղբանոց) հէնց կողքին մի փայտէ ձկան (կալսելու տակտակ) էր դրած, վրան էլ չոր խոտ փռած: Դա իմ թախտս ու անկողնուս էր: Զուլ վերմակիս՝ ֆէրաճիկիս մէջ փաթաթված թախտիս վրա վէր եմ ընկած: Ծուռը թեւս կծել էր, բաւական մեծ վէրք բացել, բայց այդ ոչինչ, խիստ մրսելուց եւ «վարցաւը» (տիֆ) բռնված էի: Զը գիտեմ ինչքան էր անցել, մի օր, շաբաթ, թէ ամիս, աչքս բացի:
Ծուռս, կարծես ուրախացած, պոչը շարժեց, մօտեցաւ: Գաղցած էի, շատ քաղցած, համ էլ ծարաւ պապական, կարծես ներսս կրակ ընկել վառում էր: Դէս նայեցի, դէս նայեցի, տեսնեմ կողքիս կտորած կաւէ մի քրնգանով

ՆԱԽԱԿ ԾՈՒՇՈՒԾ

Յուլիսի 4-ին

Շուշում օրվայ հետաքրքիր հարցերից մէկը քահանայական խնդիրն է։ Գրիգոր եպիսկոպոսը հրամայել է քաղաքի եկեղեցիներին ընտրել երկ-երկու դպրոցաւարտ, ճանարանական կամ բարձ-րագոյն կրթութիւն ստացած քահանայացուներ։ Այս ոչ թէ նրա համար, որ Շուշում քահանայ չը կայ, այլ որ եղածներն մէջ արժանաւորը չը կայ։ Չը կայ մի շնորհին կրթութեան տէր քա-հանայ, որ կարողանայ եղած ուսումնարաննե-րում կրօնի դասեր աւանդել։ Ահա ինչքան զփառք են շուշեցիները քահանայի կողմից։

Չունենք քահանայ, դա փաստ է։ Շատ ուսն-ջանք, նեղութիւններ ենք կրել արժանաւոր քա-հանայ չունենալուց, խրատովէնք։ Դիմեցէք լը-րագրութեան, յայտարարեցէք, խնդրեցէք լաւե-րին, վարձ փշանակեցէք, ապահովեցէք վիճակը, փառք Աստուծոյ, կարող էք։ Եւ հանդէս եկող լաւերը շատ կը լինեն։

Մի ցաւալի իրողութիւնն այն է, որ մեր տէրաւորները ուզում են խառնել, պղտորել ժո-ղովրդի մարքերը, կուսակցութիւններ ստեղծել, որ նոր քահանաներ չը ձեռնադրվեն։ Ինչու— Պատասխանը շատ պարզ է։

Անցեալ կիրակի Աղլաւի շուկայում ցորենը ծախվել է 50—60 կօպէկ պոչը։ Իսկ մեզա-նում հացի գինը մի հարցնէր—1 ր. 60 կ.—1 ր.—80 կօպէկ։ Թանգ են եւ սարսափելի թանգ նաեւ միւս մթերքները։ Օրինակ, մօտիկ գիւ-ղում ծախվող 10 կօպէկանոց վառիկը դուր-այտեղ կանէր 35 կօպէկով։ Փոշուր մի կօ-պէկ ծախվող դամբուլը—12 կօպէկ, հատը 1 կօպէկ ծախվող խիւրը—4 կօպէկ եւ այլն եւ այլն։ Ո՛վ է տէրը, տիրակալն։ Փողոցները կեղ-տոտ, փոշին մարդ է խեղդում։ Հազար անգամ անմիթար, քան ի՞նչ ի՞նչ դարերում, երբ քա-ղաքային վարչութեան անունը լսելուց մեծ կա-րօտով էինք ակնկալում նրան։—Յուսակալութե-ցանք։

ՆԵՐԿԻՆ ԼՈՒՐԵՐ

Կովկասի կառարարչապետ իշխան Գ. Ս. Գո-լիցին, ինչպէս հետագրում են «ԿԱՅԿԱՅ» լրա-դրին Պետերբուրգից, ճանապարհ ընկաւ Պե-տերբուրգից դէպի Կովկասեան հանքային ջրերը։

Թիֆլիսի քաղաքապետի պաշտօնակատարը ստացաւ Թիֆլիսի նահանգապետից մի առա-ջարկութիւն՝ յայտնել քաղաքային գումարին, որ Թիֆլիսի քաղաքային հասարակական վար-չութեան միջնորդութիւնը՝ Թիֆլիսում պօլի-տեխնիկում հիմնելու մասին լեռնային եւ գիւ-ղատնտեսական բաժանմունքներով, երկրագոր-ծութեան եւ ներքին գործերի միւնիստրութիւն-ները մերժեցին։

Թանէ ապուր (սպաս) է դրած։ Այդ երեւի տան մեծ հարսը բերած կը լինէր (նա մի փոքր քաղցր աչք ունէր իմ վրա), եւ ամեն օր քրէ-ղանը դատարկ տաններով կարծել է թէ կերել եւ... Այն ինչ եւ միտք վայր եմ ընկած անդը-գայ։ Շունս ապուրի կողքին պըպըղած մէկ լկում է խփշուռ, մէկ ինձ նայում վրնգվըն-գում... Ապա թողեց թանապուրը եկաւ թե-ւիս վերջն սկսեց լիզվոթել։ Նոր զգացի, որ թեւս արդէն առավոյ պէս չէր ցաւում, երե-ւի շանս լիզելուց լաւացել էր։ Բայց փորս վեց-վեց էր անում։ Մէկն էլ իսկի ներս չէր մտնում, թէ մի կտոր հաց ուզէի, իսկ շան լկած թանապուրը կողքին էր, ինչ անէի, էլ ճարս ինչ էր. մի կերպ ձեռքս մեկնեցի, քրէ-ղանն առայ, մինչեւ տակը պապակ դնէիս քա-չեցի։ Մի րօպ կարծես սիրտս զովացաւ, բայց ծարաւս ուրիշ չանցաւ։

Լուռ էր գոմը, ոչ ոք չը կար. գոմէջ ու եղ, կով ու հորթեր կուշտ-կուռ կերած ուռած, տաղած, շարան-շարան պառկել, ձգվել, որոճում են մշուում, անուշ հանգիստ մրափում։ Շունս էլ դունչը թեւին դրած մոմում է։ Մենս մե-նակ եւս հանգիստ դադար չունէի, աչքս դունչ էր. սիւ երբ պիտի մէկը ներս գար, որ մի պուռ շուր ուզէի. ծարաւ պապակ վառվում էի, ներսս կրակ, սիրտս դոճիւք էր դարձել։ Բայց գոմի դուռը չէր բացվում եւ ում պէտքն էր որ բացվէր... Ում դարձն էր թէ խեղճ մը-շակը ներս գոմը անտէր, հիւանդ պառկած է եւ կամ արդէն հոգին փշած՝ մեռած է... Ասեմք ինչ էլ պիտի յիշեն մտածեն. մշակն աղի աչ-քում հոգի երբ ունի... Անտէր միւս էր կեան-քը, գնայ կորչի, էլ յետ չը գայ ինձ համար... Գոնէ մայրս էլ կենդանի չէր, քոյր չունէի, եղ-

Թիֆլիսի նահանգի ժողովրդական դպրոցների դիրեկցիան միջնորդութիւն յարուցեց քաղա-քային ինքնավարութեան առաջ, խնդրելով մշա-կան տարեկան նպաստ նշանակել հայոց եկե-ղեցիներին կից գտնվող եկեղեցական ծխական դպրոցներին, որովհետեւ այդ դպրոցները, կով-կասեան ուսումնարանական շրջանի իրաւասու-թեան տակ անցնելուց յետոյ, զրկվեցին նուի-րաւարութիւնների միջոցով հաւաքվող գումարնե-րից, եւ ստիպված են իրանց գոյութիւնը պահ-պանել յատուկ միջոցներով։ Այդ միջնորդու-թիւնը քննեց քաղաքային դպրոցական յանձնա-ժողովը, որը, ի նկատի առնելով, որ քաղաքը միջոցներ չունի, մերժեց այդ միջնորդութիւնը։ Բաղադրային վարչութիւնը, քննելով այդ միջ-նորդութիւնը, վճռեց միջնորդութիւն յարու-ցանել գումարի առաջ՝ այդ դպրոցներից իւրա-քանչիւրին նպաստ նշանակելու 150 րուբլի տա-րեկան։

Յուլիսի 1-ին վերջացաւ Պետերբուրգի նոր բացվող պոլիտեխնիկում մտնել ցանկացողների խնդրքները ընդունելութիւնը։ Ընդամենը 2500 խնդրքներ են տրված։

«Черн. Вѣстникъ» լրագրի տեղով, միջնոր-դութիւնը Բուխարայում տեղական հրէաների համար տարրական դպրոց բանալու մասին՝ յարգված է, եւ այդ դպրոցի բացումը տեղի կունենայ ներկայ տարում։

«Աուրհանդակ» լրագրի մէջ կարդում ենք, «Էլմիսանի մայր տաճարի շինութեան համար լատկացում 70000 րուբլի գումարը անցնալին մէջ վառուներ է անյարմար սենեակներ շինելու համար։ Այս միջոցին միտքերը կը զբաղեցնէ վեհաբանի շինութիւնը։ Գար ու աւաղ բերուեր, գործին շինութեան համար յանձնաժողով մին ալ կազմուեր է, սակայն ինչպէս դիզուած քարն ու աւաղը կոյտ մը ձեւացնելով անշարժ կե-ցեր է, անանկ ալ յանձնաժողովը տեղէն շար-ժելու միտք չունի։ Գործը ձգձգող վիճակի մէջ է, մայր տաճարն ու վեհաբանն ալ կամաց կա-մաց փլշելու վրա են։ Բազում քրքր, որոնց ծախ-քով պիտի ըլլայ այդ շինութիւնը, իրենց դրամն ալ ծանր ծանր կը զրկեն կրօնի»։

Ներկայ տարին մեծ թւով խնդրքներ են ստաց-վել Պետերբուրգի կայսերական զինուորական-բժշ-կական ակադէմիայում այն անձինքների կողմից, որոնք ցանկանում են մտնել այդ ակադէմիան։ Խնդրքների ընդունելութիւնը կը շարունակվի մինչեւ յուլիսի 15-ը, բայց այժմ արդէն ստաց-ված խնդրքների թիւը աւելի չափ է, քան ազատ տեղ կայ ակադէմիայում։ Այս տարի ա-ռաջին անգամ, բացի հասունութեան վկայա-կան ունեցող անձինքներից, ակադէմիայում կընդունվեն նոյնպէս ընտանական դպրոցի եօթ-կուսարանն աւարտած աշակերտները։ Որովհե-

բայր չը կար, որ գէթ մի պուրջ պաղ ջուր տային... Էլ ինչին էր պէտք էս կենանը, թիւղ վար անցնէր, փշանաւ... Էս աշխարհը հա-րուստինն է, աղինն է, խեղճը, աղքատը, մշակն ինչի է ծնվում... Բայց ինչ էլ որ մտածէի ծա-րաւս իսկի մտքիցս չէր դուրս գալիս։ Ուժ-կող արի, շունչս հաւաքած սկսեցի գոռալ, կանչել լարինդաւ... Բայց իղուր. հչ ք լալկան ձէնս չառաւ, ներս չեկաւ, մէկ էլ ամուր կանչեցի, աղաչեցի, բայց ինչ օգուտ, մենակ շունս էր ինձ լուռ, նա էլ սկսեց վրնգվընգալ։ Սիրտս աւելի լցվեցաւ։ Փորձ արեցի վեր կենալ, գլուխս պատեց, աչքերս մուծ մթնեցին, ու ես լալով հեծկալալով վայր ընկայ...

Լացի, լացի, սրտանց լացի, շատ լացի, աղա-չեցի Արարչին, որ կամ հողիս առնէ պրծնեմ էր. ինձ ու գոմէջ ոտի կանգնած բառաչում են, փրկատուս։ Նրանք էլ քաղցած, ծարաւ էին։ Հէ, ամեն օր այդ ժամանակ մալը վաղուց դարման էր, թէ չէ գիտէի ինչ կուտէի... Իսկ այդ օրը «մշակ» չը կար, պառկած էր. տանը մարդը շատ պէտքն էր թէ կուշանայ։ Ամեն ինչ իր ժամանակին միայն մշակից են պահան-

Առաւօտ էր. մութ մշուշը գոմն առել էր։ Աղբի հոտը, մալի շունչը ծխի նման կանգնել էր։ Եղ ու գոմէջ ոտի կանգնած բառաչում են, փրկատուս։ Նրանք էլ քաղցած, ծարաւ էին։ Հէ, ամեն օր այդ ժամանակ մալը վաղուց դարման էր, թէ չէ գիտէի ինչ կուտէի... Իսկ այդ օրը «մշակ» չը կար, պառկած էր. տանը մարդը շատ պէտքն էր թէ կուշանայ։ Ամեն ինչ իր ժամանակին միայն մշակից են պահան-

տեւ թոյլտուութիւն ստացվել է ընդունել այն անձանց միայն, որոնք ուսում են առել ընթա-լական դպրոցներում, ուստի ուրիշ դպրոցներում սովորած անձինք, թէկու՞ղ նրանք ձեռք բերած էլ լինեն ընտանական դպրոցներն աւարտածների ի-րաւունքը քննութեան միջոցով, ակադէմիայում չեն ընդունվի, ինչպէս եւ չեն ընդունվի հոգե-ւոր սեմինարիաների, կադէտների կօրպուսների, աւետարական դպրոցների աշակերտները։ Ներ-կայումս տրված խնդրքների թիւը համարեա երկու հարիւր է հասել։

Էլմիսանի գաւառի ԳԵՉՐՈՒ գիւղից մեզ գրում են. «Ճորենի հունձը վերջացած կարելի է համարել. բերքը բաւական առատ է. ցորենի խալվարը (30 պուղը) մօտակայ Սարգարաբաղ գիւղում ծախվում է 16—17 ր.։ Բամբակի բոյսերը առայժմ լաւ են. եթէ յուլիսի 10-ից մինչեւ օգոստոսի 15-ը բամբակի բոյսը չեն-թարկվեց «չօտ» հիւանդութեան, խոտտանում է առատ բերք»։

Էլմիսանի գաւառի ՈՒՋՈՒՆՈՐԱ գիւղից մեզ գրում են. «Նախորդ տարիների նման այս տարի եւս մեր գաւառամասի ազգաբնակչու-թեան ոխերիմ թխնամի—բօրենին այս քանի օրերս կրկին երեւաց։ Յունիսի 30-ին, կիրակի օր, գիշերվայ ժամը 2-ին, երբ գիւղական ազ-գաբնակչութիւնը դաշտային ծանր աշխատանքից յետոյ խորքն մէջ էր ընկղմված կուռերների վրա, նա զբնակում է գործում։ Ուղուօրս հայա-բնակ գիւղի վրա եւ յափշտակում 17 տարե-կան մի զեռահաս աղջկայ։ Դիակը գտնում են բոլորովին ալյանդակված. կերել էր ազգրի փա-փուկ միսը եւ կրծքակը պատռելով՝ լափել էր սիրտն ու թոքերը։ Պ. պրիստաւի յայտարա-րութեան համաձայն, Էլմիսանի գաւառագետ պ. Շմերլինցի կարգադրութեամբ նոյն գիւղն են ուղարկվում յուլիսի 2-ին գաւառագետի օգնական իշխան Անգրոնիկով, 3 օֆիցեր եւ 20 զինուոր բորենուն հետամուտ լինելու եւ սպա-նելու։ Խստիւ հրամայված է բոլոր տանուտէր-ներին եւ օգնականներին—բորենուն հետամուտ լինելու եւ գիւղից պահպանելու համար նշա-նակել իւրաքանչիւր գիւղից բաւական թւով գիշերային պահապաններ։ Ազգաբնակչութիւնը սարսափի մէջն է. քնում են տներում. նրանց դրութիւնը անտանելի է, եթէ ի նկատի ունե-նանք յուլիսեան տօթ գիշերները»։

ԾՈՒՇՈՒԾ մեզ գրում են. «Յուլիսի 3-ին, Ն. Խանգամիրեանի թատրոնական դահլիճում կայացաւ օպերային երգիչ Ա. Կոստանեանի համերգը։ Մրադիր բաւական հետաքրքիր էր կազմված։ Պ. Կոստանեան լաւ երգիչ է, եր-գում է զգացված, խալոյժ տեմպերամենտով, ծայր արժանաշիւ նկչիւ է, տեմպը դուրեկան, վարել եւ վերի ըգգիտը քիչ թոյլ է. ինչ վե-րաբերում է միջին կրօնային ըգգիտներին, բա-

շում Ես քնադաւամբ զգացի, որ շատ ուշ է։ Բայց դեռ գոմի երթիքներն էլ բացած չէի։ Աչքս բացի, ծարաւս իսկոյն զգացի, բայց գի-տէի ուր որ են հիմա կը գան մային դարմանը տալու. դէ անի խիղճ կուռնեան, մի պուռ ջուր էլ ինձ կը տան... Աչքերս էլի փակեցի, որ չը գգամ թէ րօպէները որքան կամաց են անցնում։ Յանկարծ մէկը ոտքով հրեց։

—Մօ, շան ակոտ, հերք չեղաւ չնթիկիս, հօրդ մշակ վե՛լ կայ էստեղ... Էլ բան-դործի աչ, թէ չէ դնէ վախտին (ժամանակին, վաղ) դուրս չըվէ...

—Տի՛ք տացու, դէ հիւանդ եմ կը տեսնես, ճար ունենամ չնմ ելլիւ։

—Հիւանդ-միվանդ եմ չը գիտեմ, փարա կուռնես պիտի դադես...

—Դէ ինչ էնեմ, տացու շան, ես խօ կամըով չը հիւանդայ... ձեր ոչխորին խոտը բերի մրսե-ցայ...

—Կաշես, կաշես շան լալկոտին, թամբըլու-թանը (ծուրկութիւնից) պառկել է մահանաւ ա (պատմաբար) մեր ոչխորը կը բռնէ... Դէ էլ, դէ էլ չըվէ հարաւադաւա, բողի լալկոտ, թէ չէ քիչ ա կենաս էստեղ վե՛լ (ու) գիտէ ինչ շա-ռեր էնես...

Ու վրայիս ֆէրածիկը քաշեց ուժով դէն ձը-գեց... Էլ ճար չը կար, ես գիտեի գաղաք դարձած «աղա» մարդու գոզվի ու խիղճը... Հայհոյանալի ականջներս դեռ շատ վաղուց էր սովորել, դա մշակի կեանքը «աղն ու համանն է», բայց այդ օրվան հայհոյանքը սիրտս ծա-կեց... «Բողի լալկոտ»... Ողջուկ մօրս, մեռած մօրս սուրբ անունն էր աղբոտում։ Ողջ աղ-բատի ոսկորներն էլ գերեզմանում հանգիստ չունեն... հարուստ աղի հայհոյանքի անարկալ

ական զօրեղ է։ Չայնի դիպապոնը այնքան էլ մեծ չէ, նոյն իսկ գլխային լեւա, սի-բեմօլ-ի երգիչը խուսափում է։ Պ. Կոստանեան երկու հինգ դրան կարելի է վերագրել նրա մի քանի օպերային երգիչը բեմի վրա, բացի երգելուց խաղում է, նա իրան բոլորովին ազատ է զգում խաղի ժամանակ. նոյնը չէ համերգական էստ-րադան, որտեղ զանազան բեմական շար-ժուածքներ արգելվում են. այստեղ երգիչը ինչ-պէս մի գէկամատօր միայն զգացված երգով եւ նորը արտասանութեամբ պէտք է աղէ հանդիսականների վրա։ Ընդհանրապէս պ. Կոս-տանեան մեծ աղողութիւն ունեցաւ ժամա-նակակից երաժիշտների հեղինակութիւնների պարոնը ընտրել էր Գրիգ-ի «ԳԱՅԱՅԵՅԱ ՄԵՇԵՐ» եւ Բլեյխմանի «УСТА МОИ МОЛЧАТ»։ Իսկ ամե-նից վերջը երգեց ժողովրդական երկու երգ «Կոռնիկ» եւ «Պաղ աղբիւրի մօտ»։ Պ. Կոստ-անեանին շատ ծափահարեցին. սիրողներից մա-նակցում էր Ս. Արամեան, որը իբրեւ սիրող բաւական աղող նուագեց Չայկովսկու բալլա-քան ջութակի վրա։ Դաշնակցում էր օր. Վ. Շանչիւկան, որը ամենայն բարեխղճութեամբ կատարեց իր դերը։ Համերգը վերջացաւ ժա-ն 12-ին. հանդիսականներ բաւական կային եւ եթէ թատրոնը լիք չէր, դրա պատճառը կա-լի է համարել գեների չափազանց թանգութիւն։

ԵՐԵՎԱՆԻՑ մեզ գրում են. «Եղանակինը զգալի կերպով փոխվեցին, յաճախ ամպում է եւ անձրեւում։ Արարանի կողմերը անձրեւ չէ գալիս եւ դաշտերը թշուառ դրութեան մէ-լին. բայց այժմ այնտեղ էլ անձրեւում է. Շե-րաքանի կողմերից աննպաստ լուրեր են լը-վում երաշխի մասին, բայց լսում ենք այնտեղ էլ անձրեւներ եկել են»։

ՍԱՆԴՂԱՄԻՇԻԾ մեզ գրում են. «Յուլիսի 1-ին այստեղ մի յանդուգն եղեռնագործութիւն պատահեց։ Այդ օրը, ժամը 8-ին, Միացական Չալոկեանցը՝ Հայկ խաչատրեանցի խառնու-թում նստած խօսելիս եւ լինում, այդ ժամա-նակ ներս է մտնում խանութը Չալոկեանցի նախկին գերեզմատարներից մէկը եւ խառնու-թեամբ պահանջում է 15 րուբլի։ Չալոկեան-ցը ասում է, թէ այժմ փող մօտս չունեմ, աստիկ կը ստանաս. իսկ երիտասարդը, առանց այլ եւ այլ, կողքից քար ընկած խանցալով վերադարձում է Չալոկեանցին եւ մահացու վէրք հասցնում։ Գիւնդին իսկոյն տարան տե-ղիս գիւղաւորական հիւանդանոցը։ Բժիշկները ջանքերը ապարդիւն անցան, երրորդ օրը, այ-սօր, ամիս 3-ին, սարսափելի տանջանքներից յետոյ մեռաւ։ Չարագործը ձերբակալված է»։

ԵՐԵՎԱՆԻՑ մեզ գրում են. «Երեւանի պարոնի հացթուխները խիստ նեղացնում են հաց տե-

նե... Է՛հ, ինչ անեմ, ճակտիս գիրն էր... ինչ աղբաւ էր ծնվել... Կամաց-կամաց վեր կացաւ։ Երեւանի իսկոյն մթնեցին, քիչ էլ մնում վաղ ընկնէի։ Դէ, ո՞վ գիտէ քանի օր էր քաղ-ցած փորս հացի պատառ չէր մտել... Պատի-սիւնից ամուր բռնած մի կերպ հասայ դը-ստան։ Տան մեծն աղաս հաստ չիբուխը բըր-նին լուռ նստած էր մեծ օջախի հէցն ափին։

—Աղա ամի, Տի՛ք տացու դուրս կենէ, դը-ինչ կրես, երթում թէ չէ...

—Ի՞նչ կրես, երթում թէ չէ...

—Դէ հախս (վարձ) տուր, երթում, աղա...

—Հախս... ինչ հախ կուգես, ծօ իշու ձագ...

—Ախր, աղա, օխտը ամիս դադել էր...

—Օխտը մօխտը չը գիտեմ, չըվէ... պալ-

ման ունիք կատարէ, հախս տամ...

—Դէ հիւանդ եմ ինչըլ էնեմ... հախս թա-մամ (ամբողջ) խօ չեմ ուզել, դատածինս տու-երթում...

—Մօ, ես քեւ... բերին աչ... պապաբեր...

Էլ չը գիտեմ ինչ եղաւ։ Աչքս բացի դառն ընկած եմ։ Ցուրտ դուրսը, բուք ու բորան, քամին դարձել փշուր, շաչում, շառաչում էր։ Մենակ էի, մե-մենակ։ Փոքրիկ շունս, մենակ շունս էր գլխի կանգնած մնացնում ու կարծես թէ ակալիկ լուռ փոփոտւել, խօսում, ասում, որ ես ու դու ընկեր ենք, ես էլ եթ ուս, դու էլ էլ եթ ուս, ես էլ անտէր, դու էլ ան-տէր, մենք ախ պէ էր ենք...

Չալոկեանցի

Электротечатня Груз. Издат. Т-ва, Б. Ванеская ул.